



Ա Մ Ս Ա Գ Ւ Շ

ԿՐՈՆԱԿԱՆ, ՊԱՏՄՈՎՈՆ, ԲՈՆԱԾԻՐՈՒԱՆԱՆ ԵՀ ԲՈՐՈՅՆԱՆ

ԹԻՒ Ե. — ՏԵՐԻ Դ.

1871

ՄԵՅԻ 31

Կ Ր Օ Ն Ա Ա Կ Ա Ն

Կ Ր Օ Ն

Ե Ե
Մ Ե Ր Դ

Ե: Կրօն պէտք է ամեն մարդու համար, որպէս զի կարողանայ ճանաչելով և սիրելով զԱստուած միանդամայն ծառայելով՝ նոմին հանդիսատ և երջանիկ լինել:

Կրօնի հիմն և սկիզբ է Աստուած, որ իրեւ ամենակարող Հոգի ստեղծեց զմարդ, և իւր բարի կամքելով զարդարեց զնաբանական, աղլադ և անմահ հոգեռուէ:

Կրօն ընդհանրապէս ուխտ կամ դաշն է Աստուածոյ և ազատ մոտաւոր արարածոց մէջ, իսկ մասնաւորապէս ուխտ հաղորդութեան Աստուածոյ և մարդոյ մէջ:

Սուրբ զրոց մէջ կրօն ընդհանրապէս ուխտ բառով կը գործածուի: Կան այլ

անուանք, որ նորա այլ և այլ մասունքները
կը ցուցանեն, զօ. կրօն կը կոչուի Հաւատու,
Շարշեղուշու-Ռի-Ն, Պաշոն, Երկի-Ն Տէ-
ռը իւմ Աստուծոյ, Շ'անալ-Ն Ա-
ստուծոյ, Աէր, Օքէնտ, Շ'շմբու-Ռի-Ն Ա-
ստուծոյ, Շ'անալուրն իւնաց, Շ'անալուրն
Քրի-Ռի-Ն, Շ'անալուրն Տէտուն: Արօնի
երկու անուանք՝ իմն Հաւատք և Բարե-
պաշտութիւն՝ առաւել գործածական են
մեր մէջ:

Մարդո՛ հոգի է և մարմին:

Հոգին ունի միոք ձգտող յարաժամ
առ Ճշմարտութիւն, ունի կամք սիրող զբա-
րին, ունի զգացողութիւն և եռանդ եր-
ջանկութեան: Իսկ ամենակատար Ճշմար
տութիւնն ծայրագոյն բարութիւն և ան-
վախճան երանութիւնն միմիայն Աստուած
է: Աւսաի հոգին ստեղծուած է ճանաչել
և սիրել զԱստուած դերազանցապէս: Այս
է ներքին Աստուածաշատութիւն:

Մարմին՝ հոգւոյ պաշտօնեայն լինելով
կը յայտնէ նորա խորհուրդները, յօժա-
րութիւնքը և զգացողութիւնքը երկելո-
պէս կրօնի պաշտամանց մէջ: Այս է ար-
տաքին Աստուածապաշտութիւն: Եւ որով-
հետեւ մարդոյ դերագոյն և առաջին բարե-
րար և աեր է Աստուած, որ ոչ միայն
շնորհեց նմին զօյութիւն և վսեմազոյն
կարողութեամբք յարդարեց և զարդարեց,
այլ նաև առատապէս կը հոգաց նորին հո-
գեոր և մարմնաւոր պիտոյքքը: Ա անորոյ
պարտաւոր է մարդ առ հասարակ Աստու-
ծոյ երախտեաց փոխարէն՝ ճանաչել և հա-
ւատապէլ նմին, նաև եռանդուն սիրել զնա,
անհուն հնազանդութեամբ նորին օրինաց
հպատակել, ամեն յցս և ակնկալութիւն

յանձնել ի նա, և ի հոգի և ի մարմին փա-
ռաւորել զնա:

Ե: Մարդ՝ բաղկացեալ ի հոգւոյ և ի
մարմին՝ յորժամ ծնանի յաշխարհ և ու-
նի կենցաղավարել ի նմին, բնականաբար
ձգտումն ունի գործել զոր ինչ տեսանե
և ուսանի: Բոլոր շարժմանց և գործո-
ղութեանց մէջ առաջնորդն է հոգին, իսկ
հոգւոյն բաղձալին է Աստուած, ուրիմն
կրօնն է պէտք իրրե զեկ և ուղղել ընթա-
ցից հոգւոյ առ Աստուած:

Արօնի կրկին նպատակ սուրբ է և բարի
թէ երկրի վերայ և թէ երկնից յաւիսե-
նականութեան անմահ կենաց համար:

Առաքինութիւն՝ որ կրօնից Ճանապար-
հըն է, ով կարէ մերժել և ոչ սիրել: Բա-
րեգործութիւն՝ որ կրօնի դրօշակն է, ով
կարէ տաել և զրկել զանձն ի մասնակցու-
թենէն:

Մարդ՝ թէ և բանական՝ թէ, և աղաս
հոգւով արարչագործեալ է և հակամէտ
և բնականաբար խանգակաթ է երջանկու-
թեան և անմահութեան, բայց ինչպէս նո-
րատունկ ծիլ և որդէս գեռարօյ ծաղեկ՝
օտար աղղեցութեանց՝ այսինքն է այլոց
նպաստից և մատակարարութեանց և խու-
մոց կարօտ է երբ կենաց առաջին ընթա-
ցից մէջ ի տղայական (կամ յերեխայա-
կան) տիս կը զտանուի: Մինչ նորածին
է, իբրև բանական էակ՝ լեզու ունի՝ բայց
չդիտէ, խօսիլ միոք ունի՝ չդիտէ խորհիլ,
սիրու ունի՝ չդիտէ, զգալ, ոտք ունի՝ ան-
զօր է ընթանալ, վերջապէս ունի շաա այլ
անդամներ՝ կամ ամեն բան որ ինչ մարդ-
կային կազմուածքին կարեոր է, սակայն
ոմանք հաստատուն կազմք և դիբը բռնած

չն, ոմանք անզօր են տակաւին, ոմանք այսպէս կամ այնպէս են: Աւրեմն իշխափէս կածին և կը զարգանան:

Մանուկն կը զօրանայ մօր կաթ ծծելով, կը զարգանայ ի դիրկս մօրն կամ նորա հետ, կը տեսնէ ինչ որ ծնօղքն դորձեն, կուսանի զոր ինչ նոքա կը դանան կամ պարտաւոր են հաղորդել, այսպէս զամենայն ինչ ըստ իւրումն կարգի և ժամանակի: Եսպա ուրեմն մանուկն թէն ի ծնօղացն՝ այլ համարեսցուք թէ յայլոց կամ յօտարաց տեսանելով և ուսանելով կը զարգանայ, կածի և կը մտանէ ի շար մարդկութեան: Աւրեմն օտար կամ ընտանեկան ազգեցութեանց և ինամոց ներքե մանկան առաջի կայ կշռել զեւր ապադայն կամ ի չարն և կամ ի բարին: Են շնուշտ մանուկն չգիտէ կշռել զչարն կամ զբարին: Աւրեմն մանկան ապադայնն որպիսութիւնը կախումն ունի բոլորովին ի խնամոց յատկապէս մօրն կամ օտար դաշյեկաց ազգեցութեանց:

Գ: Չկարեւիք ուրանալ, զի երբ ապատ ստեղծագործուած բանական արարած՝ մարդ՝ առանց սահմանաց և օրինաց իսպատսպուռ ապատութեան մէջ թողուլ լինի, զի՞նչ արդեօք չարիք և վիշտք կը հետեւին ի մարդկանէ՝ ընկերաց վերայ, կամ զի՞նչ դիսուածք էր տեսանել ի վերաց աշխարհի: Ե.յլ խնդիր էր եթէ անհուն Բնութիւն՝ տմենակարող մեր Տէր՝ այլ կերպ ընդունակութեանց և ազգեցութեանց ենթարկէր զմարդ՝ ինչպէս անբան կենդանիքն են: Եսպաքէն ինչ որ այժմ մարդն է, և զոր ինչ ունի, պէտք է խոստովանիմք, որ մարդկութիւնը տմենուք էր այսպէս կամ այնպէս կարօտի սահ-

մանաց՝ օրինաց և կանոնաց, որք անշուշտ վերջակէտ պիտի ունենան մի բարի նպատակի վերայ հիմնեալ, և ընտական դաստիարակ մայրն կամ ծնօղքն նոյնպիսի նպատակօք պարտաւոր են խնամել կրթել և զարգացնել զմանուկն: Ե.հաւասիկ այս բարի նպատակի ամենացանկալի հիմնա վերայ կրօնն է և պէտք է լինի ընդհանուր հիմն սահմանաց և օրինաց. և կրօնն անմահութեան երջանիկ կենաց և վայելութեան սիրով վառելով զմարդ առ Եսուած՝ յամենայնի միշտ և հանապազ ամենայն հզօր միջոցներ ունի սանձել զմարդ, և զհողին ուղղել առ Բաղդալին իւր:

Դ: Եսպաքէն այսպէս առանց կրօնի չիք կեանք. առանց կրօնի հոգին մեռեալ է. առանց կրօնի մարմինն ապերջանիկ և թշուառ է խապառ, միանգամայն գերեզման ժահահուա և զզուելի:

Եենաց ընթացից մէջ նախ կրօն կարեւոր և անհրաժեշտ է, որպէս զի սահման ունենաց ամեն շարժմանց և գործողութեանց, և միենոյն նպատակով առաքինութեան հանդէսներ փայլին, և յաւիտենական երջանկութիւն պատկէ զամենայն:

Պ երցուր կրօնը, և ահա ամենայն թշուառութիւնք, անտանելի չարագործութիւնք կը տիրապետեն աշխարհի, և վայ յետ այնորիկ: Տղիտութիւնը՝ որ խիստ մեծագոյն մաս կարող է կազմել մարդկութեան մէջ, ժողովուրդք՝ որ մարդկութեան անդամք են՝ կը կարօտին կենաց և գործողութեանց ամենայն մասանց մէջ՝ կանոնաց՝ օրինաց և սահմանաց: Ոչ ապաքէն շարժիչ և թելաղիր պէտք է, զզացմունք կարեւոր է, զզացմանց նպա-

տակ անհրաժեշտ է, նպատակին առաջնորդ և ուղեցոյց է որոշուած և հարկ է լինել, որ միմիայն կրօնն է, և աչա այս կարօղ պէտք է լինի անօրինող կանոնաց՝ սահմանաց և օրինաց։ Օսուա պաշտելի և գործադրելի հանդիսացուցանող առաւել կրօնն է. և միթէ վատթար և դառն հետեանաց համար է։

Աչինչ այնքան սանձել չէ կարող զժողովուրդ՝ որբան կրօն։ ԱՇ, քանի քաղցր է նմին մահ վասն կրօնի։ Չիք տարակոյս Արօնի համար դիտէ, զոհել ամենայն բան Արօնի համար ամենայն ձախորդութեանց և արկածից մէջ կզայ մեծ մխիթարութիւն և յոյս։

Թագաւորք և բռնաւորք՝ Նեթանոսք և Քրիստոնեայք կրօնից շնորհներով կիշխին և կիշխեն ժողովրդեան, և թէ առանց կրօնից չեն կարողացած գոյութիւն ունենալ և չեն կարող։ Մինչեւ անգամ եղան աշխարհակալք՝ որք զանձինս պաշտեցուցին ժողովրդեան, որպէս զի առաւել ոգեորելով նոցա կրօնական զզացմունքները՝ ամենահլու հպատակներ և կյր գործիքներ կազմեն՝ ամենայն կամաց և պատուիրանաց ազդեցութիւն խորագոյն տպաւորելոյ համար։

Միշտ և ամենայն կողմ աշխարհի կրօն տիրած է և կը տիրէ. չկայ երկիր և ժողովուրդ՝ որ առանց կրօնի լինի։ Ըստ ոչ ամենայն կրօն ճշմարիտ է և փրկարար, և ոչ ամենայն տեղ կրօնն միատեսակ և միենոյն նպատակի և հաւատոյ վերայ հպատառած է։ Իազմատեսակ կրօններ կան և միմեանց հակառակ՝ ինչպէս Քրիստոնեութիւն, Նորէից, Պրամանաց, Մահմետականաց և այլոց։ Առաջննն ևս բա-

զում տեսակներ ունի՝ մինչեւ անգամ միմեանց հակառակ՝ միւնոյն Քրիստոսի հետեւղ խոսանվանելով զանձինս, և մեր նպատակն է յաջորդ թուով սոցին տարբերութեանց վերայ համառօտ տեսութեամբ անցնիլ։

ՎԱՆՈՐԱՅՔ

Քրիստոնէական Սստուածպաշտութեան առաջին հանդիսարանքը կը կաղմեն Ա անօրայք։

Յաշխարհէ մէկուսացող՝ մշտամունչ աղօթից և աստուածային մտածմանց և անմահ կենաց սիրահար անձանց բնակարան են Ա անօրայք։

Ոոցա մէջ կրօնքը հաստատահիմն շառաւիղներ արձակելով՝ բարի օրինակներ և աստուածասէր առաքինութեանց անձկալի նախանձներ կընծայեն ժողովրդեան։ Ոոցա մէջ կը զարդանան կրօնից պաշտօնեայք, և ի սոցանէ կը տարածուեին և պէտք է տարածուին ի Նայաստան աշխարհի քարոզողներ Բանին Կենաց։ Միով բանիւ՝ սոցա մէջ մեր Արօնից՝ Ա կեղեցւոյ և Ազգի պաշտպանութիւն և ապահովութիւն ամրացած էին և պէտք են ամենակերպ յարձակմանց ընդդէմ։

Գրեթէ յամենայն դարս, եթէ ոչ բոլոր՝ գէթ շատերը յազգային վանօրէից քանի՛ և որպիսի՝ մեծառանձ և սխրալի ծառայութեամբք բազմաշահ օգուտներ ընծայելով՝ թե և թիկունք հանդիսացած են ազգի ի պաշտպանութիւն մեր Ա. Ա կեղեցւոյ՝ թողլ պատմութիւնը վկայէ, որ բազում մասամբք կապացուցանէ։